

## Ամերիկյան գրականություն, Պատմվածք, Արձակ

16+

«Ջիս-Ուկի պատմությունը» պատմվածքն առաջին անգամ տպագրվել է «Սմարթ սեթ» պարբերականում, 1902 թվականի սեպտեմբերին:

Թարգմանիչ՝ Վահան Վարդանյան

## Ձեկ Լոնդոն

### Ջիս-Ուկի պատմությունը

Չոհաբերություն էլ կա, զոհաբերություն էլ: Բայց զոհաբերության երկությունը միշտ նույնն է: Այստեղ տարօրինակն այն է, որ մարդ ամենաթանկագին բանից հրաժարվում է հանուն ինչ-որ էլ ավելի թանկագին բանի: Եվ միշտ էլ այդպես է եղել: Այդպես է եղել, երբ Չաբելը զոհաբերել է առաջնածինների իր հոտը և նրանց ճարպը: Նրա առաջնածին ոչխարների հոտը և նրանց ճարպը աշխարհում ամենաթանկն էին նրա համար, բայց և այնպես նա դրանք նվիրաբերեց, որպեսզի լավ հարաբերությունների մեջ մնա աստծու հետ: Այդպես է եղել, երբ Աբրահամը զոհասեղանին է դրել իր որդի Իսահակին: Նա սիրում էր Իսահակին, բայց չգիտես ինչու աստծուն ավելի շատ էր սիրում: Սակայն գուցե նա պարզապես վախենում էր աստծուց: Բայց ինչ էլ որ լինի, այդ պահից ի վեր մի քանի միլիարդ մարդիկ հավատացել են, թե Աբրահամը սիրել է աստծուն և տենչացել է ծառայել նրան:

Իսկ քանի որ որոշված է, թե սերը ծառայություն է, և քանի որ զոհաբերել՝ նշանակում է ծառայել, ապա սրանից հետևում է, որ Ջիս-Ուկը, մի թխամորթ հասարակ աղջիկ, մեծ սիրով էր սիրում: Ջիս-Ուկը կարողանում էր կարդալ միայն եղանակի նշանները և մեկ էլ որսի հետքերը: Նա ծանոթ չէր սուրբ պատմությանը և երբեք չէր լսել ոչ Չաբելի, ոչ էլ Աբրահամի մասին: Սուրբ Խաչի գթության քույրերի հոգատարությունը շրջանցել էր նրան, և ոչ ոք չէր պատմել նրան մոավիտանուհի Ռութի մասին, որը նույնիսկ իր աստծուն զոհաբերեց հանուն հեռավոր երկրի մի օտար կնոջ: Ջիս-Ուկը զոհաբերության միայն մի տեսակ գիտեր՝ գավազանի սպառնալիքի տակ, ինչպես շունն է զոհաբերում գողացած ոսկորը: Բայց և այնպես, երբ ժամանակը եկավ, նա կարողացավ հասնել սպիտակ ցեղի արքայական բարձունքներին և իսկական թագավորական զոհաբերություն կատարել:

Ահա Ջիս-Ուկի ճակատագրի, ինչպես նաև Նիլլ Բոնների, Զիտտի Բոնների և Նիլլ Բոնների երկու երեխաների ճակատագրի պատմությունը:

Թեև Ջիս-Ուկի մաշկը թուխ էր, բայց նա ոչ հնդկուհի էր, ոչ Եսկիմոսուհի, ոչ էլ ինսուլինոսուհի: Բանավոր ավանդություններում հիշատակվում է Սկոլկզի՝ յուրօրնցի թոյատ-հնդկացու անունը, որն իր ջահելության օրերին հասել է մինչև Մեծ Դելտայում գտնվող ինսուլինների բնակավայրը, որտեղ հանդիպել է Օլիլի անունով մի կնոջ: Օլիլիի մայրը եղել է Եսկիմոսուհի, իսկ հայրը՝ ինսուլինոս: Եվ Սկոլկզից ու Օլիլիից ծնվել է Չալլին՝ կիսով չափ թոյատուհի, քառորդ չափով ինսուլինոսուհի և մի քառորդով էլ Եսկիմոսուհի: Իսկ Չալլին եղել է Ջիս-Ուկի տատը:

Չալլին, որի մեջ երեք ցեղերի արյունն է խառնվել, չվախեցավ հետագա խառնումներից և ամուսնացավ մուշտակի առևտրով զբաղվող, Շպակ անունով մի ռուսի հետ, որը հայտնի է նաև Գիրուկ անունով: Շպակին այստեղ ռուս են կոչել ավելի ճշգրիտ բառի բացակայության պատճառով: Նրա հայրը, որ ռուս աքսորական էր, մնդիկի հանքերից փախել էր Յուկոնսային Սիբիր, որտեղ ճանաչել էր Չիմբային՝ Եղջերվի ցեղից մի կնոջ, և սա դարձել էր Ջիս-Ուկի պապի՝ Շպակի մայրը:

Եթե մանուկ հասակում Շպակին չառնանգեին Ծովի Մարդիկ, որոնք իրենց խղճուկ գոյությունն են քարշ տալիս Սառուցյալ օվկիանոսի ափերին, ապա նա չէր դառնա Ջիս-Ուկի պապը, և պատմելու էլ բան չէր լինի: Բայց Ծովի Մարդիկ նրան առնանգեցին, և նա փախավ գնաց Կամչատկա, իսկ այնտեղից նորվեգական կետորսական նավով հասավ Բալթիկ ծով: Այնուհետև Շպակը հայտնվեց Պետերբուրգում, մի քանի տարի անց նա դեպի արևելք գնաց նույն ծանր

ճանապարհով, որով դրանից կես դար առաջ շղթայակապ անցել էր նրա հայրը: Միայն թե Շպակը գնում էր որպես ազատ մարդ՝ Ռուսական մորթեղենի արդյունաբերության ընկերության ծառայող: Իր ծառայությունները կատարելով, նա ավելի ու ավելի դեպի արևելք էր գնում և վերջապես Բերինգյան ծովով անցավ Ռուսական Ամերիկա, որտեղ Պաստիլիկայում, Յուքոնի Մեծ Դելտայի մոտ դարձավ Հայլիի՝ Ջիս-Ուկի տատի ամուսինը: Այս դաշինքից ծնվեց Տյուքսեն աղջիկը:

Ընկերության կարգադրությամբ Շպակը նավակով մի քանի հարյուր մղոն նավարկեց Յուքոնի հոսանքն ի վեր, դեպի Նուլատո պահակակետը: Նա իր հետ վերցրեց Հայլիին և Տյուքսեն աղջկան: Դա 1850 թվականին էր, իսկ հենց 1850 թվականին հնդկացիները հարձակվեցին Նուլատոյի վրա և երկրի երեսից ջնջեցին այն: Այսպես զոհվեցին Շպակը և Հայլի: Այդ ահավոր գիշերը Տյուքսենը անհետացավ: Թոյատները մինչև հիմա էլ երդվում են, որ իրենք չեն մասնակցել այդ հարձակմանը, բայց ինչ էլ որ լինի, փաստը մնում է փաստ, որ Տյուքսեն աղջիկը մեծացավ նրանց մեջ:

Տյուքսենը երկու անգամ ամուսնացավ, բայց երեխա չունեցավ: Այդ պատճառով էլ ուրիշ կանայք գլուխներն էին օրորում, և չգտնվեց մի երրորդ թոյատ, որը կամենար ամուսնանալ անպտուղ այրու հետ: Բայց այդ ժամանակ գետի հոսանքով շատ հարյուրավոր մղոններ դեպի վերև, Ֆորտ-Յուքոնում ապրում էր Սփայկ Օ'Բրայեն անուկով մի մարդ: Ֆորտ-Յուքոնը պատկանում էր Հուդզոնի ծոցի Ընկերությանը, իսկ Սփայկ Օ'Բրայենը նրա ծառայողներից մեկն էր: Նա լավ էր ծառայում, բայց եկավ այն եզրակացության, որ ծառայությունը վատ է, ի հաստատումս որի էլ ժամանակին լքեց այն: Մի տարի էր հարկավոր, որպեսզի մի պահակակետից մյուսն անցնելով, հասներ մինչև Հուդզոնի ծոցում գտնվող Յորքի ֆակտորիան: Դրանից բացի, պահակակետերը պատկանում էին Ընկերությանը, և Օ'Բրայենը գիտեր, որ ինքը այդ ճանապարհին չի կարող խուսափել նրա ճանկերից: Մտում էր միայն մի ճանապարհ՝ Յուքոնով դեպի ներքև: Ճիշտ է, մինչև հիմա ոչ մի սպիտակամորթ դեռևս Յուքոնով ներքև չէր իջել, ոչ մի սպիտակամորթ չգիտեր՝ արդյոք Յուքոնը Սառուցյալ օվկիանոս է թափվում, թե Բերինգյան ծով, բայց Սփայկ Օ'Բրայենը քելտ էր, և վտանգը միշտ անկասելի խայծ էր նրա համար:

Մի քանի շաբաթ հետո, բավականաչափ ճղճղված, խիստ սոված և տենդի պատճառով հազիվհազ շնչելով, նա իր մակույկը դուրս բերեց թոյատների գյուղի մոտ գտնվող ծանծաղուտը ու նույն պահին էլ գիտակցությունը կորցրեց: Այստեղ երկար պառկելուց և ուժ հավաքելուց հետո նա տեսավ Տյուքսենին, և սա դուր եկավ նրան: Շպակի հայրը մինչև խոր ծերություն ապրել էր սիբիրյան եղջերու ցեղի մեջ, և Օ'Բրայենը նույնպես կարող էր ծերանալ թոյատների մեջ, բայց թե նրա սրտում արկածների տենչն էր ապրում, որը ավելի ու ավելի հեռուն էր քշում նրան: Նա արդեն անցել էր Յորքի ֆակտորիայից մինչև Ֆորտ-Յուքոն ընկած ճանապարհը, իսկ այժմ նա կարող էր Ֆորտ-Յուքոնից հասնել մինչև ծով և Հյուսիս-Արևմտյան ցամաքային անցումը առաջինը հայտնաբերած մարդու դասինները նվաճել: Այդ պատճառով էլ նա նավարկեց գետի հոսանքն ի վար, նվաճեց այդ դասինները և մնաց անհայտ ու չփառաբանված: Հետագայում նա նավաստիական պանդոկի տեր դարձավ Սան-Ֆրանցիսկոյում և հռչակվեց որպես մեծ ստախոս, որովհետև իսկական ճմարտությունն էր պատմում: Իսկ Տյուքսենը, անպտուղ Տյուքսենը երեխա ունեցավ: Եվ դա հենց Ջիս-Ուկն էր. նրա տոհմագրությունն այսքան մանրամասնորեն ներկայացվեց, որպեսզի ցույց տրվի, որ նա ոչ հնդկացուհի էր, ոչ Եսկիմոսուհի, ոչ իննուկիթուհի, և ոչ էլ մեկ ուրիշ ցեղից, ինչպես նաև որպեսզի ցույց տրվի, որ սերունդների ուղիները անհայտ են, և որ մենք բոլորս անվերջանալիորեն քմահաճ զուգակցումների խաղ ենք միայն:

Եվ ահա Ջիս-Ուկը, որի երակներում շատ ցեղերի արյունն էր հոսում, մեծացավ, դարձավ մի հրաշալի գեղեցկուհի: Նրա գեղեցկությունն արտասովոր էր և այնքան արևելյան, որ կարող էր շփոթեցնել ամեն մի ազգագրագետի: Ջիս-Ուկը ճկուն էր ու նազիկ: Նրա մեջ զուտ քելտական էր միայն աշխույժ երևակայությունը: Ճիշտ է, թերևս հենց քելտական եռացող արյունն էր նրա դեմքը դարձրել ավելի նվազ թուխ, իսկ մարմինը ավելի բաց գույնի, բայց գուցե և նա դրանով պարտական էր Շպակ Գիրուկին, որը իր սլավոնական նախնիների մաշկի գույնն էր ժառանգել: Հատկապես լավն էին Ջիս-Ուկի սև ու խոշոր փայլուն աչքերը, կիսատոհմիկի աչքերը՝ նշածև ու զգայուն, որ թուխ ու սպիտակամորթ ցեղերի հանդիպման վկայությունն էին: Եվ վերջապես այն բանի գիտակցումը, որ նրա մեջ սպիտակամորթների արյունն է հոսում, յուրօրինակ պատվախնդրություն էր ծնում Ջիս-Ուկի մեջ: Իսկ մնացած բաներում՝ սովորություններում, կյանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքի մեջ նա իսկական հնդկացուհի-թոյատուհի էր:

Մի անգամ ձմեռանը, երբ Ջիս-Ուկը դեռ բոլորովին ջահել էր, նրա կյանքում հայտնվեց Նիլլ Բոնները: Բոնները նրա կյանքում, ինչպես, ի դեպ, և ընդհանրապես Այասկայում, հայտնվեց

բոլորովին էլ ոչ իր կամքով: Մինչ նրա հայրը կտրոններ էր կտրում և վարդեր աճեցնում, իսկ մայրը աշխարհիկ զվարճություններով էր տարված, Նիյլ Բոնները ճանապարհից շեղվեց: Նա ի ծնե արատավոր չէր, բայց երբ մարդը կուշտ է և անելիք չունի, նրա եռանդը ելք է որոնում, իսկ Նիյլ Բոնները կուշտ էր և անելիք չունեց: Եվ նա իր եռանդը այնքան բուռն կերպով ծախսեց, որ երբ անխուսափելի աղետը վրա հասավ, նրա հայրը՝ Նիյլ Բոններ-ավագը, վախեցած դուրս սողաց վարդերի միջից և զարմացած աչքերը հառեց իր ժառանգի վրա: Այնուհետև նա քայլերն ուղղեց իր հին ընկերոջ և վարդերի կտրոնների գծով խորհրդատուի մոտ, և նրանք միասին վճռեցին Նիյլ Բոններ-կրտսերի բախտը: Սա պետք է մեկներ և անբասիր վարքագծով քավեր իր մեղքերը, որպեսզի ժամանակին դառնար հասարակության այնպիսի օգտակար անդամ, ինչպիսին նրանք էին:

Ընդունված որոշումը դժվար չէր կատարել: Նիյլ-կրտսերը ամոթ և զղջումն էր ապրում, իսկ նրա հին ընկերները խաղաղօվկիանոսյան ափի Ընկերության հայտնի փայտափորներ էին: Այդ Ընկերությունը, որը գետային և օվկիանոսային նավատորմի ղեկավարներ ունեցող իր ձեռքի տակ, միայն ծովերն ակոսելով չէր զբաղված: Նա իր ձեռքն էր հավաքել նաև այն տերիտորիայի մի քանի հարյուր հազար քառակուսի մղոնը, որը աշխարհագրական քարտեզների վրա սպիտակ պատերով է նշված: Այսպես, ուրեմն, Ընկերությունը Նիյլ Բոններ-կրտսերին ուղարկեց Յուլիսիս, այնտեղ, որտեղ սպիտակ պտեր են, որպեսզի նա աշխատեր և ժամանակի ընթացքում իր հոր արժանավոր որդին դառնար: «Ընկերության գրկում և գայթակղություններից հեռու սովորական կյանքի հինգ տարիները մարդ կդարձնեն նրան»,— ասաց Նիյլ Բոններ-ավագը ու թաղվեց իր վարդերի մեջ: Նիյլ-կրտսերը ատամները սեղմեց, համառ կերպով դուրս ցցեց ծնոտը և գործի անցավ: Նա լավ աշխատող էր և արժանացավ դեկավարության բարեհաճությանը: Չի կարելի ասել, թե աշխատանքը շատ էր դուր գալիս նրան: Բայց թե նրան փրկում էր խելագարությունից:

Առաջին տարին նա մահ էր աղերսում: Երկրորդ տարվա ընթացքում նա անիծում էր աստծուն: Իսկ երբ վրա հասավ երրորդ տարին՝ նա մերթ մահ էր աղերսում, մերթ անիծում աստծուն և, խճճվելով իր զգացմունքների մեջ, գժտվեց իշխանավորի հետ: Գժտությունից նա հաղթող դուրս եկավ, բայց թե վերջին խոսքը պատկանում էր իշխանավորին, և այդ խոսքը այնպիսի մի խուլ տեղ ուղարկեց Նիյլ Բոններին, որի համեմատությամբ նրա նախկին տեղը դրախտ էր թվում: Նիյլը մեկնեց անտրտուն, քանի որ Յուլիսիսը արդեն մարդ էր դարձրել նրան:

Քարտեզի սպիտակ պտերի վրա տեղ-տեղ հանդիպում են «Օ» տառի նման փոքրիկ շրջանակներ, իսկ նրանց մոտ երևում են այսպիսի անուններ՝ «Ֆորտ-Յամիլտոն», «Թանանա Պահակակետ», «Քսաներորդ Մղոն» և կարող է թվալ, թե սպիտակ պտերը լիքն են քաղաքներով ու գյուղերով: Բայց դա միայն թվում է: Քսաներորդ Մղոնը, որը նման է մնացած բոլոր ֆակտորիաներին, նկարագրելի խանութի մեծությամբ մի փայտե շինություն է, որի վերևի հարկը վարձով է տրվում կենվորներին: Յետևի բակում պահեստարանն է՝ բարձր ցցերի վրա կանգնած, և երկու փայտանոցները: Յետևի բակը պարսպված չէ, այն ձգվում է մինչև հորիզոն և նույնիսկ ավելի հեռու: Շուրջը ոչ մի բնակավայր չկա, երբեմն թոյատներն են ձմեռային ճամբար խփում Յուլիսիսի հոսանքով մի երկու մղոն ներքև: Ահա թե ինչպիսին է Քսաներորդ Մղոնը, խաղաղօվկիանոսյան ափի Ընկերության անհամար շրջափուլներից մեկը: Այստեղ Ընկերության գործակալը և նրա օգնականը հնդկացիների հետ սակարկում են մորթիների համար և պատահականորեն այստեղ հայտնված ոսկեխույզների մոտ փոխանակում ոսկու ավազով: Ընկերության գործակալն ու նրա օգնականը այստեղ ամբողջ ձմեռ սպասում են գարնանը, իսկ երբ գարունը գալիս է, նրանք ամբողջ աշխարհն անիծելով, կտուրն են բարձրանում, մինչ Յուլիսիսը ողողում է բնակարանը: Եվ ահա Յուլիսիսում գտնվելու չորրորդ տարում այստեղ էր, որ եկավ Նիյլ Բոնները, որպեսզի գործերը ինքը ստանձնի:

Նա ոչ ոքի տեղից չգրկեց: Նախկին գործակալը, ինչպես նրա օգնականը հաղորդեց, «ձանր պայմանների պատճառով» վերջ տվեց իր կյանքին: Ծիշտ է, թոյատական խարույկների մոտ ուրիշ բան էին ասում: Այդ օգնականը մի կուզ մարդ էր՝ ներս ընկած կրծքով և ցանցառ սև մազերով ծածկված փոս այտերով: Նա հաճախ հագում էր, ասես թոքախտը կրծում էր նրա թոքերը, և խելագարության տենդագին հոլերն էր վառվում նրա աչքերում, ինչպես այդ լիևում է թոքախտավորների մոտ վերջին օրերին: Նրա անունը Փենտոյի էր՝ Ամոս Փենտոյի: Նա Բոններին դուր չէր գալիս, թեև սա անկեղծորեն խղճում էր միայնակ ու հուսահատ մարդուն: Այս երկուսը իրար հետ յուր չգնացին. իսկ բարեկամությունը խիստ հարկավոր էր նրանց. չէ՞ որ սկսվելու էին ցրտերը, երկարատև ձմռան լռությունն ու խավարը:

Վերջ ի վերջո Բոնները եկավ այն եզրակացության, որ Ամուսը այնքան էլ նորմալ չէ, և որոշեց ձեռք չտալ նրան, իր վրա վերցնելով ամբողջ աշխատանքը, եփութափից բացի: Բայց թե Ամուսը շարունակում էր չար հայացքներ նետել նրա վրա, չփորձելով թաքցնել իր ասելությունը: Բոնների համար ծանր էր. այստեղ նրա համար այնքան մեծ նշանակություն կունենային ժպտացող դեմքը, աշխույժ կատակը, ընդհանուր տառապանքներից ծնված բարեկամությունը: Եվ ձմեռը դեռ նոր էր սկսվել, իսկ Նիլլ Բոններն արդեն հասկացել էր, որ նախկին գործակալը, այդպիսի օգնական ունենալով, բավականաչափ պատճառներ ուներ իր վրա ձեռք բարձրացնելու համար:

Զսաներորդ Մդոնում մենակությունը խիստ էր զգացվում: Շուրջը մինչև հորիզոն փռվել էր տխուր անապատը: Ձյունը կամ, ավելի ճիշտ, եղյամը, սպիտակ սավանով ծածկել էր հողը, և ամեն ինչ թաղվել էր մահվան լռության մեջ: Շաբաթներով պարզկա, ցուրտ եղանակ էր անում, և ջերմաչափը միշտ ցույց էր տալիս քառասուն-հիսուն աստիճան սառնամանիք: Այնուհետև սկսվում էր փոփոխությունը: Խոնավությունը դանդաղորեն ներծծվելով մթնոլորտի մեջ, կապարտ անձև ամպեր էր գոյացնում: Տաքանում էր: Ջերմաչափը բարձրանում էր մինչև միսուս քսան, և գետն էին թափվում կարծր բյուրեղիկներ, որոնք շաքարի կամ չոր ավազի պես խստխստում էին ոտքերի տակ: Այնուհետև նորից պարզկա, ցուրտ եղանակ էր սկսվում. իսկ երբ բավականաչափ խոնավություն էր կուտակվում օդում՝ հողը ցրտից ծածկելու համար, նորից սկսում էր տաքանալ: Ահա և բոլորը: Ոչ մի իրադարձություն չկար: Չկար ոչ փոթորիկ, ոչ ջրերի շառաչ, ոչ կուտրվող ծառերի ճարճատյուն. սառցե բյուրեղիկների միալար թափվելուց բացի ուրիշ ոչինչ: Այդ երկարատև տխուր շաբաթների ընթացքում ամենանշանակալից իրադարձությունը, թերևս, այն էր, որ սնդիկը հասնում էր չտեսնված բարձրության՝ գրոյից ցած հիսուն աստիճանի: Հետո, ասես թե ի հատուցումն, տիեզերական ցուրտը պատեց գետինը, սնդիկը սառեց, իսկ սպիրտե ջերմաչափը երկու շաբաթ մնաց յոթանասուևի վրա: Վերջապես այն տրաքեց, և հայտնի չէ, թե դրանից հետո ինչքան իջավ ջերմությունը: Մյուս երևույթը, որ միալար էր իր պարբերականությամբ, այն էր, որ գիշերները ավելի ու ավելի էին երկարում, մինչև որ օրը վերածվեց խավարը կիսող լույսի կարճատև փայլատակումի:

Նիլլ Բոնները սիրում էր իր նմանների ընկերակցությունը: Հենց նրա զանցանքները, որոնց համար նա այժմ ապաշխարում էր, առաջացել էին նրա չափից դուրս մարդամոտ լինելուց: Եվ ահա իր աքսորի չորրորդ տարում նա ընկավ մի մռայլ, լռակյաց մարդու ընկերակցության մեջ (այս բառը այստեղ հնչում էր որպես ծաղր), մի մարդու, որի աչքերում անհիմն, բայց խոր ասելություն կար: Եվ Բոնները, որին բարեկամական զրույցը հարկավոր էր ինչպես օրը, ապրում էր ուրվականի նման, անցած կյանքի հրճվանքների հիշողությամբ տանջվելով: Ցերեկը նրա դեմքը անթափանցելի էր ու շուրթերը սեղմված, բայց թե գիշերը նա ձեռքերն էր կոտրատում և երեխայի պես հեկեկալով թավալվում անկողնում: Նա հաճախ հիշում էր իշխանավորի դեմքը և գիշերվա երկար ժամերին անհիծում նրան: Նա անհիծում էր նաև աստծուն: Բայց աստված ամեն ինչ հասկանում է, և նրա հոգում չկա դատապարտումն այն թույլ մահկանացուների համար, որոնք Այլասկայում աստծուն են հայհոյում:

Եվ ահա Զսաներորդ Մդոն եկավ Ջիս-Ուկը, որպեսզի այլուր ու ապուխտ գնի, ձեռագործի համար ուղևորներ ու վառվառն գործվածքներ գնի, և որպեսզի նրա այստեղ գալով, թեև ինքը այդ մասին չգիտեր, Զսաներորդ Մդոնում գտնվող միայնակ մարդը էլ ավելի միայնակ դառնար, որպեսզի գիշերը երազում դատարկությունը գրկեր: Չէ որ Նիլլ Բոնները տղամարդ էր: Երբ Ջիս-Ուկը առաջին անգամ պահեստ եկավ, Բոնները նրան էր նայում, ինչպես ծարավից մեռնողն է նայում զուլալ աղբյուրին: Իսկ Ջիս-Ուկը, որի երակներում Սփայլ Օ'Բրայնենի արյունն էր հոսում, նրան ժպտաց ոչ այնպես, ինչպես թխամորթները պետք է ժպտան արքայական ցեղերի մարդկանց, այլ ինչպես կինն է ժպտում տղամարդուն: Մնացածը անխուսափելի էր, բայց Բոնները այդ բանը չէր հասկանում, և որքան ավելի էր ձգտում դեպի Ջիս-Ուկը, այնքան ավելի կատաղորեն էր կռվում իր գայթակղության դեմ: Իսկ Ջիս-Ուկը: Նա Ջիս-Ուկն էր, իսկական հնդկուհի՝ թոյատների ցեղից, եթե ոչ ծնունդով, ապա դաստիարակությամբ:

Նա ապրանք գնելու համար հաճախ գալիս էր ֆակտորիա և հաճախ նստում մեծ վառարանի մոտ, կոտրատված անգլերենով խոսում Նիլլ Բոնների հետ: Եվ սա արդեն սպասում էր Ջիս-Ուկին, և այն օրերին, երբ նա չէր գալիս, տխրում էր, ու չէր կարողանում հանգիստ նստել: Երբեմն Բոնները հանկարծ երկար մտածում էր, թե ինչ է տեղի ունենում, և այն ժամանակ Ջիս-Ուկը հանդիպում էր սառը զապվածության, որը կատաղեցնում էր աղջկան ու շփոթեցնում, թեև նա համոզված էր, որ Բոնների այդ վարմունքը կեղծ է: Բայց հաճախ Բոնները մի կողմ էր թողնում

մտածմունքը, և ֆակտորիան լցվում էր խոսք ու ծիծաղով: Ամոս Փենտլին, շնչահեղձ լինելով, ինչպես ձուկը ավազի վրա, գերեզմանային խուլ հագից ցնցվելով, նայում էր նրանց ու քթի տակ ժպտում: Նա, որ այնքան ապրել էր ուզում, դատապարտված էր ու տանջվում էր, որ ուրիշներն ապրելու են: Նա Բոններին ատում էր նրա համար, որ սա առողջ էր ու կենսալից, նրա համար, որ նա այնքան ուրախանում է Ջիս-Ուկի գալով: Իսկ բավական էր, որ Ամոսը սոսկ մտածեր աղջկա մասին, սիրտն սկսում էր կատաղորեն բաբախել և արյունը եփ էր գալիս:

Ջիս-Ուկը պարզ աղջիկ էր, մտածում էր շիտակ և սովոր չէր հասկանալու կյանքի նրբությունները: Ամոս Փենտլին նրա համար բաց գիրք էր: Նա պարզ ու հստակ կերպով, առանց ավելորդ բառերի, Բոններին նախագգուշացնում էր, բայց սա, որ սովոր էր քաղաքակրթության պայմանականություններին, չկարողացավ ճիշտ գնահատել իրավիճակը և միայն ծիծաղում էր աղջկա երկյուղի վրա: Ամոսը Բոնների համար մահվան դատապարտված մի խեղճ հիվանդ էր, իսկ Բոնները կրած տառապանքներից հետո սովորել էր ներել:

Եվ ահա մի առավոտ, խիստ սառնամանիքների ժամանակ, նախաճաշից հետո նա վեր կացավ սեղանից և գնաց պահեստ: Ճանապարհին շառագունած Ջիս-Ուկը սպասում էր այնտեղ, որպեսզի մի տոպրակ այլուր գնի: Մի քանի րոպե հետո Նիլը արդեն պարկը կապում էր նրա սահնակին: Կռանալիս նա զգաց, որ վիզը ծովում է, և աղետի տագնապալի զգացումը համակեց նրան: Վերջին կապը զցելով, նա փորձեց շտկվել, բայց ուժեղ ջղաձգությունը նրան շարտեց ձյան մեջ: Գլուխը ետ ընկավ, մեջքը կորացավ, ձեռքերն ու ոտքերը անբնական կերպով ձգվեցին, և թվում էր, թե ջղաձգումներով բռնված մարմինը կտոր-կտոր է լինում: Առանց ճչալու, առանց ծափուկ հանելու Ջիս-Ուկը չորեք նրա կողքին՝ ձյան մեջ, բայց Բոնները հոսսահատորեն սեղմեց նրա ձեռքերը, և մինչ ջղաձգումները շարունակվում էին, աղջիկը ոչինչ անել չէր կարող: Մի քանի վայրկյան հետո նոպան անցավ, վրա հասավ խիստ թուլությունը, Բոնների ճակատին քրտնքի կաթիլներ հայտնվեցին, շուրթերը ծածկվեցին փրփուրով:

— Շո՛ւտ,— խռպուտ շնչաց նա:— Շո՛ւտ: Տո՛ւն:

Այն է, նա ուզում էր չորեքթաթ սողալ, բայց Ջիս-Ուկը իր ուժեղ ձեռքերով բռնեց նրան, և Բոններին հաջողվեց աղջկա օգնությամբ հասնել պահեստ: Այնտեղ նորից սկսվեցին ջղաձգումները: Աղջիկը չկարողացավ նրան պահել, և նա կծկված գլորվեց հատակին: Ներս մտած Ամոս Փենտլին հետաքրքրությամբ նայում էր, թե ինչ է կատարվում:

— Օ՛ Ամո՛ս,— բացականչեց Ջիս-Ուկը՝ սարսափից և իր անգորության գիտակցումից իրեն կորցրած:— Նա մեռնել, այո՛:

Բայց Ամոսը միայն ուներ թոթվեց և շարունակեց նայել:

Բոնների մարմինը թուլացավ, ջղաձգումները դադարեցին, և դեմքի վրա թեթևություն երևաց:

— Շո՛ւտ,— ատամների արանքից ասաց նա: Նրա շուրթերը ցնցվում էին վերահաս նոպան հաղթահարելու համար ջանք գործադրելուց:— Շո՛ւտ, Ջիս-Ուկ: Դե՛ր: Տա՛ր ինձ: Տա՛ր:

Աղջիկը գիտեր, որ դեղարկող գտնվում է սենյակի խորքում, վառարանի հետևում, և ոտքերից բռնած այնտեղ քարշ տվեց ջղաձգումների մեջ գալարվող մարմինը: Նոպան անցավ, և Նիլը, թուլությունը հաղթահարելով, դժվարությամբ բացեց դեղարկողը: Նա տեսել էր, թե ինչպես այդպիսի ջղաձգումներից մեռնում էին շները և գիտեր, թե ինչ պետք է անել: Նա վերցրեց քլորալիդիդրատի շիշը, բայց չծալվող թույլ մատները չէին կարող խցանը հանել: Այդ արեց Ջիս-Ուկը, մինչ նա գալարվում էր ջղաձգումների մեջ: Ուշքի գալով, Նիլը իր առջև տեսավ բաց շիշը, և Ջիս-Ուկի սև խոշոր աչքերի մեջ կարդաց այն, ինչ տղամարդիկ միշտ կարդում են բարեկամ կնոջ աչքերում: Նա մեծ քանակությամբ թմրադեղ կուլ տվեց և, երբ հաջորդ նոպան անցավ, ջանք գործադրելով հենվեց արմուկների վրա:

— Լսիր, Ջիս-Ուկ,— ասաց նա դանդաղ, հասկանալով, որ չի կարելի ժամանակ կորցնել, բայց և այնպես վախենալով շտապել:— Արա, ինչ որ կասեմ: Մնա այստեղ: Միայն ինձ ձեռք չտաս: Ինձ չի կարելի ձեռք տալ, բայց ինձանից չհեռանաս:— Նրա ծնոտներն սկսեցին սեղմվել, դեմքը ծռմուկեց, բայց նա թուքը կուլ տալով, փորձում էր հաղթահարել վրա հասնող ջղաձգությունը:— Չհեռանաս և բաց չթողնես Ամոսին: Հասկանո՞ւմ ես: Ամոսը պետք է այստեղ մնա:

Աղջիկը գլխով արեց: Նուպաներն իրար էին հաջորդում, բայց այժմ ավելի ու ավելի էին թուլանում և ավելի սակավ դառնում: Ջիս-Ուկը Բոններից չէր հեռանում, բայց նրա պատվերներին հետևելով, չէր համարձակվում ձեռք տալ նրան: Ամուսը հանկարծ անհանգստացավ և այն է՝ ուզում էր գնալ դեպի խոհանոց, երբ աղջկա աչքերի սպառնալից փայլը կանգնեցրեց նրան, և հետո միայն ծանր շնչառությունն ու խուլ հազն էին հիշեցնում նրա ներկայությունը:

Բոնները քնել էր: Կարճատև օրվա աղոտ լույսը հանգեց: Ամուսը Ջիս-Ուկի սևեռուն հայացքի տակ վառեց նավթի լամպերը: Վրա էր հասնում գիշերը: Յուսիս Նայոդ լուսամուտի մեջ երկինքը ողորվեց հյուսիսափայլով, այնուհետև կրակե փայլատակումների խաղին հաջորդեց խավարը: Անցավ ևս մի փոքր ժամանակ, և Նիյլ Բոնները արթնացավ: Ամենից առաջ նա համոզվեց, որ Ամուսը չի գնացել, հետո ժպտաց Ջիս-Ուկին ու վեր կացավ: Նրա մարմինը փայտացել էր, մկանները ցավում էին, և նա դժվարությամբ ժպտում էր, շոշափելով ու տրորելով գոտկատեղը: Այնուհետև նրա դեմքը խիստ ու վճռական արտահայտություն ստացավ:

— Ջիս-Ուկ,— ասաց նա:— Վերցրու մոմը: Գնա խոհանոց: Այնտեղ սեղանի վրա ուտելիք կա՝ պաքսիմատ, բակլա և ապուխտ: Եվ հետո վառարանի վրա սուրճ կա: Այդ բոլորը բեր այստեղ, դիր վաճառասեղանի վրա: Կբերես նաև բաժակ, ջուր ու վիսկի: Շիշը պահարանի վերին թարեքում է: Վիսկին չմոռանաս:

Մի բաժակ թունդ վիսկի խմելով, Նիյլն սկսեց ուշադիր գննել դեղարկրի պարունակությունը, մի կողմ դնելով մի քանի շշեր. Յետո նա վերցրեց ուտելիքի մնացորդները և փորձեց տարրալուծել: Ժամանակին քոլեշում նա աշխատել էր լաբորատորիայում և բավականաչափ հնարամիտ էր, որպեսզի հիմա, նույնիսկ անհրաժեշտ բաները ձեռքի տակ չունենալով, իր նպատակին հասներ: Տղամեծերի բնույթը, որոնցով ուղեկցվում էին նուպաները, հեշտացնում էր խնդիրը: Բոնները գիտեր, թե ինքը ի՞նչ պետք է փնտրի: Սուրճի հետազոտությունը արդյունք չտվեց, բակլայի մեջ նույնպես ոչինչ չկար: Բոնները առանձնապես մանրազնի կերպով զբաղվեց պաքսիմատներով: Ամուսը, որ գաղափար չունեի քիմիայի մասին, հետաքրքրությամբ էր հետևում նրա գործողություններին, բայց Ջիս-Ուկը խորապես հավատում էր սպիտակամորթների իմաստությունը և առանձնապես Նիյլ Բոնների իմաստությունը, ուստի և, իմանալով, որ ինքը ոչինչ չգիտե, նայում էր Նիյլի դեմքին ու ոչ թե նրա ձեռքերին:

Բացասելով մի հնարավորություն մյուսի հետևից, Նիյլը վերջապես անցավ վերջին ստուգմանը: Լույսի դեմ բռնելով նեղ շիշը, որը փորձանոթի դեր էր կատարում, նա նայում էր, թե ինչպես է լուծույթի մեջ դանդաղ նստվածք տալիս արը: Նա ոչ մի բառ չասաց, թեև տեսավ այն, ինչ սպասում էր: Ջիս-Ուկը, աչքը Բոնների դեմքից չկտրելով, նույնպես ինչ-որ բան տեսավ: Էգ վագրի պես նա հարձակվեց Ամուսի վրա և հոյակապ, ուժեղ ու ճկուն մի շարժումով նրան երեսնիվայր գցեց իր ծնկի վրա: Լամպի լույսի տակ փայլատակեց աղջկա դանակը: Ամուսը չարությամբ խոխոռում էր, բայց, նախքան դանակը ցած կիջներ, Բոնները հասցրեց միջամտել:

— Ապրես, Ջիս-Ուկ: Բայց հարկավոր չէ: Թող նրան:

Աղջիկը հնազանդվեց դժկամությամբ, և Ամուսը ծանրորեն ընկավ հատակին: Բոնները մոքասիկի քթով հրեց նրան:

— Վեր կացեք, Ամուս,— հրամայեց նա:— Դուք պետք է այսօր և եթե ճանապարհ ընկնեք:

— Ի՞նչ է նշանակում դա. . . — կատաղության մեջ փնթփնթաց Ամուսը:

— Դա նշանակում է, որ դուք փորձել եք ինձ սպանել,— շարունակեց Նիյլը սառը, հանգիստ ձայնով:— Դա նշանակում է, որ դուք եք սպանել Բերձոլին, թեև Ընկերությունում ինքնասպան են համարում նրան: Դուք ինձ թունավորել եք բնամորմով: Աստված գիտե, թե ինչով եք վերջ տվել նրա կյանքին: Ես ձեզ կախել չեմ կարող. առանց այդ էլ դուք զրեթե մեռած եք: Բայց Քսաներորդ Մդոնում մենք միասին լինել չենք կարող, և դուք ստիպված կլինեք հեռանալ: Մինչև Սուրբ Խաչի առաքելությունը երկու հարյուր մդոն է: Եթե ձեր ուժերը պահպանեք՝ կհասնեք: Ես ձեզ կտամ սննդամթերք, սահնակ և երեք շուն: Այստեղ ձեզ փակի տակ պահելը իմաստ չունի: Միևնույն է, դուք այս տեղերից դուրս գալ չեք կարող: Ես մի հնարավորություն եմ թողնում ձեզ: Դուք գերեզմանի եզրին եք: Լավ: Ես մինչև գարուն ոչինչ չեմ հայտնի Ընկերությանը: Ահա ձեզ ժամկետ, որպեսզի մեռնեք: Իսկ հիմա՝ հեռացեք:

— Դու քնիր,— պնդում էր Ջիս-Ուկը, երբ Ամոսը անհետացավ խավարում:— Դու դեռ հիվանդ ես, Նիյ:

— Իսկ դու լավ աղջիկ ես, Ջիս-Ուկ,— պատասխանեց նա:— Ահա քեզ իմ ձեռքը: Բայց քո տուն գնալու ժամանակն է:

— Ես քեզ դուր չեմ գալիս,— ասաց աղջիկը:

Բռնները ժպտաց, օգնեց աղջկան մորթե վերնագգեստը հագնելուն և նրան ճանապարհեց մինչև դուռը:

— Շատ ես դուր գալիս, Ջիս-Ուկ,— ասաց նա կամացուկ:— Շահտ-շատ:

Բայց երբ արկտիկական գիշերվա քողը էլ ավելի ամուր պարուրեց երկիրը, Նիյ Բռնները համոզվեց, որ ինքը ժամանակին շատ քիչ է գնահատել մեռնող մարդասպան Ամոսի մռայլ դեմքն անգամ: Զսաներորդ Մղոնում լիակատար մենակություն տիրեց: «Պրենտիս, ի սեր աստծո, որևէ մեկին ուղարկեցեք ինձ մոտ»,— գրեց նա գետի հոսանքով երեք հարյուր մղոն դեպի վերև գտնվող Ֆորտ-Յամիլտոնի՝ Ընկերության գործակալին: Ուղարկված հնդկացին վեց շաբաթ հետո վերադարձավ հետևյալ հակիրճ պատասխանով՝ «Գործերս վատ են: Ոտքերս ցրտահարվել են: Ինձ էլ է հարկավոր: Պրենտիս»:

Էլ ավելի վատ էր այն, որ թոյատների մեծ մասը կարիբուների հոտի հետևից գնաց երկրի խորքը, և Ջիս-Ուկն էլ գնաց նրանց հետ: Որքան հեռու էր աղջիկը, այնքան ավելի մոտիկ էր թվում, և Բռնների երևակայությունը միշտ նրան պատկերում էր մերթ կանգառներում, մերթ ճանապարհին: Վատ է մենակ լինելը: Հաճախ նա առանց գլխարկի դուրս էր փախչում խաղաղ պահեստից և բռնակցով սպառնում երկնքի հարավային մասի այն լուսավոր շերտին, որը օր էր նշանակում: Իսկ պարզկա ցուրտ գիշերներին նա դուրս էր թռչում և թռքերի ամբողջ ուժով գոռում, մարտահրավեր նետելով լռությանը. կարծես նա կենդանի արարած էր և կարող էր ընդունել այդ մարտահրավերը: Երբեմն նա գոռում էր քնած շների վրա, մինչև որ սրանք սկսում էին ոռնալ: Նա մի բրդոտ շան բնակեցրեց իր տանը՝ նրան Պրենտիսի կողմից ուղարկված նոր օգնականի տեղ դնելով: Նա փորձեց շանը սովորեցնել, որ գիշերը վերմակի տակ մտնի և մարդու պես սեղան նստի: Բայց շունը, գայլերի այդ ձեռնասուն ժառանգը, չէր ցանկանում ենթարկվել, թաքնվում էր մութ անկյուններում, գոմռում և կծոտում նրա ոտքերը, այնպես որ նա վերջ էր վերջո ծեծեց նրան ու վռնդեց:

Այնուհետև Նիյ Բռնները բռնվեց անիմիզի կրթով: Բնության բոլոր ուժերը վերածվում էին կենդանի արարածների և շփվում նրա հետ: Նա վերստեղծեց նախնադարյան պանթեոնը, զոհասեղան կանգնեցրեց ի պատիվ արևի, և մոմ ու խոզաճարպ վառեց նրա վրա, իսկ չցանկապատված բակում, ցցերի վրա կանգնած պահեստի մոտ ձնե սատանա սարքեց, և երբ սնդիկը սառչում էր, դեմքը ծամռելով՝ նրա տնազն էր անում: Իհարկե, դա խաղ էր: Նա նորից ու նորից իրեն համոզում էր դրանում, չիմանալով, որ խելագարությունը հաճախ արտահայտվում է հենց ինքն իր առջև ձևանալու և խաղի մեջ:

Մի անգամ, ձմռան կեսին, Զսաներորդ Մղոն եկավ հայր Շամպրոն՝ ճիզվիտական առաքյալը: Բռնները հարձակվեց նրա վրա, տարավ ֆակտորիա, գրկեց ու լաց եղավ այնպես, որ քահանան ինքն էլ լաց եղավ կարեկցանքից: Այնուհետև Բռնները խելահեղորեն գվարճացավ ու ճոխ խնջույք սարքեց, երգվելով, որ հյուրին բաց չի թողնի: Բայց հայր Շամպրոն իր օրդենի անհետաձգելի գործով շտապում էր Ադի Ջուր և հաջորդ առավոտյան մեկնեց իր հետ տանելով Բռնների այն սպառնալիքները, թե իր մահվան մեղքը քահանայի վրա կընկնի:

Նա արդեն մոտ էր այդ սպառնալիքի իրագործմանը, բայց այդ ժամանակ երկարատև որսից հետո թոյատները վերադարձան ձմեռային կանգատեղին: Մորթիները շատ էին, և Զսաներորդ Մղոնում աշխույժ առևտուր սկսվեց: Ջիս-Ուկը գալիս էր ուլունքների ու վառվառն գործվածքների համար, և Բռնները աստիճանաբար նորից գտնում էր իրեն: Նա մի ամբողջ շաբաթ պայքարեց: Հետո մի անգամ երեկոյան, երբ Ջիս Ուկը պատրաստվում էր գնալու, պայքարն ավարտվեց: Աղջիկը դեռ չէր մոռացել, թե ինչպես էին իրեն մերժել, իսկ նրա մեջ ապրում էր Սփայլ Օ'Բրայենի հպարտությունը, մի հպարտություն, որը Բրայենին մղեց հայտնագործելու Հյուսիս-Արևմտյան ցամաքային անցումը:

— Ես գնում եմ,— ասաց աղջիկը:— Բարի գիշեր, Նիլ:

Բայց Բոնները դռան մոտ հասավ աղջկա հետևից:

— Մի՛ գնա,— ասաց նա:

Եվ երբ աղջիկը հանկարծ պայծառացած դեմքը շրջեց նրա կողմը, նա դանդաղորեն ու հանդիսավոր կերպով խոնարհվեց, ասես երկրպագելով, և համբուրեց աղջկա շուրթերը: Թոյատները շուրթերը համբուրելու նշանակությունը չեն հասկանում, բայց աղջիկը հասկացավ և ուրախ էր:

Զիս-Ուկի գալով կյանքը անմիջապես պայծառացավ: Զիս-Ուկը չափից դուրս երջանիկ էր, իսկ նրա հետ երջանիկ էր նաև նա: Աղջկա մտածողության պարզությունը, նրա միամիտ կոկետությունը զարմացնում ու հիացմունք էին պատճառում քաղաքակրթությունից հոգնած մարդուն, որը իջել էր մինչև աղջկա աստիճանը: Աղջիկը նրա մենակության միսթարությունը չէր միայն. նրա անմիջականությունը նորացրեց տղայի գերհագեցած ոգին: Թվում էր, թե երկար դեգերումներից հետո նա գլուխը խոնարհել էր մայր բնության ծնկներին: Կարճ ասած, նա Զիս-Ուկի մեջ գտավ աշխարհի երիտասարդությունը՝ երիտասարդություն, ուժ և ուրախություն:

Եվ Նիլի կյանքի վերջին բացը լրացնելու համար, ինչպես նաև այն բանի համար, որ նա և Զիս-Ուկը չհոգնեին իրարից, Զսաներորդ Մդոն եկավ Սենդի Մաքֆերսոնը, ամենաընկերականը այն բոլոր մարդկանցից, ովքեր երբևէ սուլելով վազել են շների հետևից կամ երգել ճամբարային խարույկի մոտ: Ոմն քահանա պատահմամբ Յուքոնի հոսանքով մի երկու հարյուր մդոն վերև գտնվող նրա կանգատեղին էր եկել ճիշտ ժամանակին, որպեսզի անդրջիրիմյան աղոթք կարդար նրա ընկերոջ դիակի վրա: Մեկնելուց առաջ քահանան ասաց.

— Որոյակ իմ, այժմ դուք մենակ եք մնում:

Եվ Սենդին տխրությամբ գլխով արեց:

— Զսաներորդ Մդոնում,— ավելացրեց քահանան,— մի միայնակ մարդ կա: Դուք, որոյակ իմ, իրար հարկավոր եք:

Այնպես պատահեց, որ Սենդին դարձավ ցանկալի երրորդը ֆակտորիայում, այնտեղ ապրող տղամարդու և կնոջ եղբայրը: Սա Բոններին սովորեցրեց իշայծյամների ու գայլերի որս անել, իսկ դրա փոխարեն Բոնները դուրս քաշեց շատ կարդալուց աղտոտված, մաշված մի գրքույկ, և Շեքսպիրով կախարդված Սենդին շուտով հնգտևյա յամբեր էր թափում համառոտ շների գլխին: Տղամարդիկ երկար գիշերներին քրիբեջ /Զրիբեջ — թղթախաղի տեսակ/ էին խաղում և վիճում տիեզերքի մասին, իսկ Զիս-Ուկը, լավ տեղավորվելով բազմոցի մեջ, նրանց գուլպաներն էր կարկատում և մոքսափնները նորոգում:

Գարունը եկավ: Արևը վերադարձավ հարավից: Հողը իր ճգնավորական հագուստը փոխարինեց թեթևամիտ աղջկա զգեստներով: Ամենուրեք ծիծաղում էր լույսը, եռում էր կյանքը: Տաք օրերը ավելի ու ավելի էին երկարում ու գիշերները դառնում էին ավելի կարճ, մինչև որ բոլորովին անհետացան: Գետը թոթափել էր սառցե զրահը, և շոգենավերի փնչոցն էր արթնացնում խուլ լռությունը: Աղմուկ, իրարանցում, նոր դեմքեր, թարմ լուրեր: Նոր օգնական եկավ Զսաներորդ Մդոն, և Սենդի Մաքֆերսոնը ոսկի որոնողների խմբի հետ գնաց հետազոտելու Քոյուկուկ գետի հովիտը: Իսկ Նիլ Բոնները լրագրեր, հանդեսներ ու նամակներ ստացավ: Զիս-Ուկը տագնապով նրան էր հետևում, որովհետև գիտեր, որ նրա ցեղակիցները ծովերի այն կողմից խոսում են նրա հետ:

Հոր մահվան լուրը շատ չցնցեց Նիլին: Փոստը մեռնողի բերանով թելադրված ներման մեղմ խոսքեր բերեց և Ընկերության պաշտոնական նամակները, որոնք Բոններին սիրալի կերպով թույլ էին տալիս ֆակտորիան հանձնել օգնականին և գնալ, ուր որ ինքը կամենա: Հավատարմատարի ուղարկած իրավաբանական երկար փաստաթղթի մեջ թվարկված էին անհամար բաժնետոմսեր, արժեթղթեր, հողատարածություններ և զանազան շարժական ու անշարժ գույքեր, որոնք հոր կտակով անցնում էին Բոններին: Մոտոգրամով շքեղ թերթիկը սիրելի Նիլին աղերսում էր շտապել անմիսթար ու սիրող մոր մոտ:

Նիլյ Բոնները կարողանում էր արագ վճիռ կայացնել և, երբ ասի մոտ փնչաց «Յուքոնի գեղեցկուհին», որը գնում էր դեպի Բերինգյան ծով, նա մեկնեց. մեկնեց շուտ վերադառնալու այն հինավուրց ստով, որը նրա բերանում նոր ու անկեղծ հնչեց:

— Ես, Ջիս-Ուկ, սիրելիս, կվերադառնամ, նախքան ձյունը գետինը կծածկի,— խոստացավ նա՝ կամրջակի վրա վերջին համբույրները տալով:

Եվ նա ոչ միայն խոստանում էր, այլև, ինչպես տղամարդկանց մեծ մասը նման պարագաներում, հավատում էր իր ասածներին: Նա Ջոն Թոմպսոնին՝ նոր գործակալին, կարգադրեց անսահմանափակ վարկ բացել իր կնոջ՝ Ջիս-Ուկի համար: «Յուքոնի գեղեցկուհու» տախտակամածից մի վերջին անգամ ետ նայելիս՝ նա տեսավ, թե ինչպես մի դյուժին բանվորներ կրում են այն գերանները, որոնք նախատեսված են կառուցելու համար գետի ամբողջ շրջակայքի ամենահարմար տունը՝ Ջիս-Ուկի տունը, որը և իր՝ Նիլյ Բոնների տունը կդառնա, նախքան առաջին ձյունը կգա: Որովհետև նա, իրոք, մտադիր էր վերադառնալ: Ջիս-Ուկը թանկ էր նրա համար, իսկ Յուկսիքը, ոսկե ապագա էր խոստանում: Նա մտադիր էր հորից ժառանգած փողերը ներդնել այդ ապագայի մեջ: Նրան առաջ էր մղում փառասիրությունը. նա կվերադառնա և իր չորս տարվա փորձի ու Շնկերության բարեկամական աջակցության շնորհիվ կդառնա Այասկայի Սեսիլ Ռոդըր /Ռոդս Սեսիլ (1853—1902) — անգլիացի գաղութարար. Հարավային Աֆրիկայում մի հսկա տերիտորիայի գավթողական արշավանքների կազմակերպիչ: Հետագայում այդ տերիտորիան նրա անունով կոչվեց Ռոդեզիա/: Նա անպայման կվերադառնա, հենց որ կարգավորի հոր գործերը, որին գրեթե չէր ճանաչում, և կմխիթարի մորը, որին մոռացել էր:

Նիլյ Բոնների Յուկսիքի վերադառնալը մեծ աղմուկ հանեց: Օջախներում բոցկլտաց կրակը, գիրուկ հորթեր մորթվեցին, և Նիլյ Բոնները ճաշակեց ու գտավ, որ դա լավ է: Նա ո՛չ միայն սևացել էր ու առնականացել, նա վերադարձել էր կերպարանափոխված՝ զուսպ, լուրջ և խորաթափանց: Նա զարմացրեց իր երբեմնի բաժակակիցներին՝ վճռականապես հրաժարվելով նախկին զվարճություններին մասնակցելուց, և նրա հոր հին բարեկամը, որն արդեն թեթևաբարո ջահելներին ուղղելու գծով ճանաչված հեղինակություն էր, ցնծությամբ ձեռքերն էր շփում:

Նիլյ Բոնների միտքը չորս տարի շարունակ գրեթե թարմ տպավորություններ չէր ստացել, բայց նրա մեջ տեղի էր ունեցել ընտրության, ամեն մի գռեհիկ ու մակերեսային բանից մաքրվելու յուրօրինակ գործողություն: Բոնները ջահելությունն ապրել էր առանց շուրջը նայելու, բայց հետո, երբ նա հայտնվեց խուլ վայրերում, կուտակված փորձի քառսը կարգի բերելու շատ ժամանակ ուներ: Նրա նախկին թեթևամիտ սկզբունքները հոօս ցնդեցին և դրանց փոխարեն առաջացան նորերը, էլ ավելի խոր ու հիմնավորված: Նա նոր ձևով գնահատեց նաև քաղաքակրթությունը: Նա ճանաչեց հողի բույրը, նա կյանքը տեսավ իր ամբողջ պարզությամբ, և այդ հանգամանքը նրան օգնեց հասկանալու քաղաքակրթության ներքին իմաստը, գիտակցելու նրա թուլությունն ու նրա ուժը: Նրա նոր փիլիսոփայությունը շատ պարզ էր՝ ազնիվ ապրելը տանում է դեպի փրկություն. կատարված պարտքը կյանքի արդարացումն է. մարդ պետք է ազնիվ ապրի և իր պարտքը կատարի նրա համար, որպեսզի աշխատի. աշխատանքի մեջ է թողությունը, աշխատել և ավելի ու ավելի լիառատ կյանքի ձգտել՝ նշանակում էր հետևել բնության պատգամներին և աստծու կամքին:

Նիլյը քաղաքի զավակ էր: Հողի հետ հարազատությունը, որ նա ձեռք էր բերել, և մարդկային բնավորության նոր առնացի ըմբռնումը նրան թույլ տվեցին ավելի խոր հասկանալու և սիրելու քաղաքակրթությունը: Քաղաքի մարդիկ օրեցօր ավելի ու ավելի թանկ և անհրաժեշտ էին դառնում նրա համար, իսկ աշխարհը ավելի ու ավելի ընդարձակ էր դառնում: Եվ Այասկան օրեցօր ավելի ու ավելի էր հեռանում, ավելի ու ավելի սակավ իրական դառնում: Իսկ հետո նա ավելի էր հեռանում, հանդիպեց Քիտտի Շարոնին՝ իր ցեղի և իր շրջապատի մի կնոջ, որը հենվեց նրա ձեռքին և այնպես տիրեց նրան, որ Նիլյը մոռացավ թե այն օրն ու ժամը և թե տարվա այն եղանակը, երբ առաջին ձյունն է նստում Յուքոնում:

Ջիս-Ուկը փոխադրվեց իր նոր հոյակապ տունը և երագելով անցկացրեց ամառվա երեք ոսկի ամիսները: Այնուհետև սրընթաց աշունն ազդարարեց մոտեցող ձմռան մասին: Օդը ցրտեց ու խստացավ, օրերը ցրտեցին ու կարճացան: Գետը դանդաղ էր հոսում, և գետախորշերը ծածկվում էին սառույցով: Այն ամենը, ինչ կարող էր, չվեց դեպի հարավ, և երկրի վրա լռություն իջավ: Օդում պտտվեցին առաջին ձնափաթիլները, և վերջին շոգենաման էր հուսահատորեն ճեղքում սառցաշերտը: Հետո հայտնվեց իսկական սառույցը՝ սառցաբեկորներ, սառցադաշտեր: Յուքոնը

փախչում էր ափերին հավասար: Յետո ամեն ինչ լռեց, գետը կանգ առավ, և օրվա փայլատակումները կորան խավարում:

Ձոն Թոմպսոնը՝ նոր գործակալը, ծիծաղում էր, բայց Ջիս-Ուկը հավատում էր ճանապարհին ուշանալուն: Նիլ Բոնները կարող էր սառցակալման պատահած լինել Չիլկոթյան լեռնանցքի և Սենթ-Մայքլի միջև ընկած որևէ տեղում,— ուշացած ճանապարհորդները միշտ էլ խրվել են սառույցի մեջ, նավակը փոխարինել են սահնակով և առաջ սլացել շներով:

Բայց թե ոչ մի շնասահնակ չեկավ Քասներորդ Մղոն: Ձոն Թոմպսոնը, չկարողանալով թաքցնել իր ուրախությունը, Ջիս-Ուկին հաղորդեց, որ Բոնները երբեք չի վերադառնա, և կոպիտ կերպով, առանց որևէ ձևականության, իր ձեռքը առաջարկեց: Ջիս-Ուկը ծիծաղեց նրա երեսնիվեր ու վերադարձավ իր նոր տունը: Ձմռան ամենաթունդ պահին, այն օրերին, երբ հույսը մեռնում է ու կյանքը դադար առնում, Ջիս-Ուկը իմացավ, որ իր վարկավորումը դադարեցված է: Դրա համար նա պարտական էր Թոմպսոնին, որը, ձեռքերը շփելով, ետ ու առաջ էր քայլում սենյակում, նայում Ջիս-Ուկի տանը ու սպասում: Նա ստիպված եղավ երկար սպասել: Ջիս-Ուկը իր շներին ծախեց ոսկեխույզների խմբին և սկսեց ուտելիքի համար կանխիկ դրամով վճարել, իսկ երբ Թոմպսոնը հրաժարվեց նրանից փող վերցնել, հնդկացի թոյատները առնում էին այն, ինչ անհրաժեշտ էր աղջկան, և գնումները գիշերով տանում նրա տուն:

Փետրվարին սառցի վրայով եկավ առաջին փոստը, և Ձոն Թոմպսոնը աշխարհիկ լուրերի բաժնում կարդաց Նիլ Բոնների ու Քիտտի Շարոնի ամուսնության լուրը, որը հինգ ամսվա վաղեմություն ուներ: Ջիս-Ուկը կիսաբաց արեց դուռը, բայց ներս չթողեց Թոմպսոնին: Աղջիկը լսեց այն, ինչ որ նա ելել էր իրեն ասելու, և հպարտ ծիծաղեց. նա չհավատաց: Մարտին, երբ նա բոլորովին մենակ էր, մի տղա ունեցավ: Նոր կյանքի այդ փոքրիկ կրակը հիացմունքով ու զարմանքով համակեց Ջիս-Ուկին: Իսկ մի տարի անց նույն ժամին Նիլ Բոնները նստած էր մեկ ուրիշ մահճակալի մոտ և հիանում էր երկրի վրա բռնկված կյանքի մեկ ուրիշ կրակով:

Ձյունը հավեց: Յուրոնն ազատվեց սառույցից: Օրերը երկարեցին, հետո նորից կարճացան: Շների դիմաց ստացված փողը վերջացավ, և Ջիս-Ուկը վերադարձավ իր ցեղի մոտ: Հաջողակ որսորդ Օչ-Իշը Ջիս-Ուկին առաջարկեց նրա և երեխայի համար որս անել ու ձուկ բռնել, եթե իր հետ ամուսնանա: Նույն բանն առաջարկեցին և Իմեգոն, և Հա-Յոն, և Ուի-Նուչը, որոնք երիտասարդ խիզախ որսորդներ էին: Բայց Ջիս-Ուկը գերադասեց մենակ ապրել և իր համար որսի միս ու ձուկ ձեռք բերել անձամբ: Նա մոքասիներ էր կարում, մորթե վերնագգեստներ ու թաթմաններ՝ տաք, ամուր ու գեղեցիկ, ասեղնագործված ուլունքներով ու զարդարված մազափնջերով: Նա դրանք վաճառում էր ոսկի որոնողներին, որոնք տարեցտարի ավելի ու ավելի էին շատանում երկրում: Այսպիսով Ջիս-Ուկը ոչ միայն կարողացավ կերակրել իրեն ու երեխային, այլև փող հավաքեց, և վրա հասավ այն օրը, երբ «Յուրոնի գեղեցկուհին» գետի հոսանքով ներքև տարավ նրան:

Նա Սենթ-Մայքլում աման լվաց ֆակտորիայի խոհանոցում: Ընկերության ծառայողները տարակուսում էին, թե ով է այդ գեղեցիկ երեխայով գեղեցիկ կինը, բայց թե նրանք ոչինչ չէին հարցնում, իսկ նա էլ լռում էր: Բերինգյան ծովի վրա նավագնացությունը փակվելուց առաջ Ջիս-Ուկը պատահաբար Սենթ-Մայքլում հայտնված ծովարջ որսացող նավով հարավ գնաց: Ձմռանը նա սպասուհի աշխատեց Ունայաշկայում՝ նավապետ Մարքիայնի տանը, իսկ գարնանը վիսկիով բեռնված նավով էլ ավելի հեռուն գնաց հարավային ուղղությամբ՝ դեպի Սիթի: Այնուհետև նա հայտնվեց Ս. Մարիամի մոտերքում գտնվող Մեթակատայում, որը Փենսիլվանիայի հարավային մասում է: Այստեղ նա իշայծյամի որսի ժամանակ աշխատեց պահածոյի գործարանում: Երբ աշունը եկավ և ձկնորս սիվաշները պատրաստվեցին տուն գնալ դեպի Փյուլջերթի ծոցը, Ջիս-Ուկը որդու հետ տեղավորվեց մայրի ծառից պատրաստված նավակի մեջ, որտեղ արդեն երկու ուրիշ ընտանիքներ էլ էին տեղավորված: Նրանց հետ մեկտեղ Ջիս-Ուկն անցավ Այասկայի և Կանադայի առափնյա կղզիների լաբիրինթոսով: Վերջապես Խուան-դե-Ֆուկի նեղուցը մնաց հետևում, և Ջիս-Ուկը, իր տղայի ձեռքից բռնած՝ նրան տարավ Սիթիի սալահատակած փողոցներով:

Այնտեղ, խաչմերուկներից մեկում, որտեղ քամին էր սուլում, նա հանդիպեց Սենդի Մաքֆերսոնին: Սա շատ զարմացավ, իսկ երբ լսեց երիտասարդ կնոջ պատմածը, շատ բարկացավ: Նա էլ ավելի կբարկանար, եթե իմանար Քիտտի Շարոնի գոյության մասին: Բայց թե Ջիս-Ուկը նրա մասին ոչ մի խոսք չասաց. նա չէր հավատում: Սենդին, որոշելով, որ կինը պարզապես լքված է, փորձեց նրան ետ պահել Սան-Ֆրանցիսկո մեկնելուց, որտեղ Նիլ Բոնների նստավայրն էր: Բայց

չկարողանալով ետ պահել, իր վրա վերցրեց բոլոր հոգսերը, տոմս առավ նրա համար, գնացք նստեցրեց, հրաժեշտի ժամանակ ժպտալով և քթի տակ փնթփնթալով՝ «Ի՛նչ ստորություն!»:

Գիշեր ու ցերեկ թխկթխկոցի մեջ, լուսաբացից մինչև լուսաբաց անընդհատ ցնցվելով, մերթ բարձրանալով դեպի ձմեռային ձյունաշերտերը, մերթ իջնելով ծաղկող հովիտները, շրջանցելով ձորերը, անդունդների վրայից թռչելով, լեռները ճեղքելով, Ջիս-Ուկը և նրա որդին սլանում էին դեպի հարավ: Բայց Ջիս-Ուկը պողպատե նժույգից չէր վախենում: Նիլլ Բոնների ցեղակիցների հզոր քաղաքակրթությունը նրան չխլացրեց: Նա միայն էլ ավելի հստակորեն զգաց, թե ինչ հրաշք էր այն, որ այդ աստվածաման ցեղի մարդը գրկել է իրեն: Նրան չչփոթեցրեց նաև Սան-Ֆրանցիսկոյի աղմկալի քառսը՝ շոգենավերի իրարանցումը, ֆաբրիկաների սև ծուխը, փողոցային երթևեկության թնոյունը: Նա միայն գիտակցեց, թե որքան ողորմելի են եղել և՛ Քսաներորդ Մոլոնը, և՛ Թոյատների ավանը՝ եղջերվամորթուց պատրաստված վիզվամներով: Նա նայում էր իր ձեռքն ամուր բռնած տղային, զարմանալով, որ այդպիսի մարդ է եղել նրա հայրը:

Վճարելով կառապանին, որը հինգ անգամ ավելի թանկ վերցրեց նրանից, Ջիս-Ուկը քարե աստիճաններով բարձրացավ դեպի Նիլլ Բոնների շքամուտքը: Շեղակն ճապոնացիներ կարատև ապարոյուն խոսակցությունից հետո ներս թողեց երիտասարդ կնոջը և անհետացավ: Ջիս-Ուկը մնաց դահլիճում, որը միամտորեն համարեց հյուրասենյակ, ուր պարծենկոտությամբ ի ցույց էին դրված տանտիրոջ բոլոր գանձերը: Պատերն ու առաստաղը հարդարված էին ողորկ կարմիր փայտով: Հատակը սառցի պես հարթ էր, և Ջիս-Ուկը, սահելուց վախենալով, կանգնել էր հատակին փռված մորթիներից մեկի վրա: Հեռավոր պատի մեջ վառվում էր վիթխարի կրակարանը: «Ինչքան փայտ վառելիս կլինի», — մտածեց նա: Սենյակը ողորկված էր լույսի հորձանքով, որը մեղմացված էր գունավոր ապակիներով, իսկ խորքում մարմարե արձանն էր փայլփլում:

Բայց նա դեռ ուրիշ բաներ էլ տեսավ, երբ շեղակն ծառան վերադարձավ ու նրան տարավ մյուս սենյակը, որը նա չհասցրեց մի լավ գնել, հետո տարավ երրորդ սենյակը: Դահլիճի շքեղությունը խամրում էր այդ սենյակների առջև: Թվում էր, թե վիթխարի տունը անհամար քանակությամբ այդպիսի սենյակներ ունի: Դրանք այնքան մեծ էին, այնքան բարձր: Ամբողջ ժամանակամիջոցում առաջին անգամ նա երկյուղածությամբ համակվեց սպիտակամորթների քաղաքակրթության հանդեպ: Նիլլը, նրա Նիլլը ապրում էր այս տանը, շնչում այս օդը, գիշերները այստեղ քնում: Այն, ինչ նա տեսավ, գեղեցիկ էր և աչքի համար հաճելի, բայց նա զգում էր, որ այս ամենի հետևում թաքնված են իմաստությունն ու հզորությունը: Ուժն այստեղ իր արտահայտությունն էր գտնում գեղեցկության մեջ, իսկ նա այդ ուժը կռահեց անմիջապես և անսխալ կերպով:

Այնուհետև ներս մտավ մի բարձրահասակ, մեծաշուք տիկին՝ գլուխը շրջանակված արևի պես փայլ տվող մազերի պսակով: Նրա շարժումները ներդաշնակ էին, զգեստը թևածում էր երգի նման, և նա դեպի Ջիս-Ուկն էր լողում ինչպես երաժշտությունը խաղաղ ջրերի վրայով: Ջիս-Ուկը ինքն էր եղել սրտեր նվաճող: Բավական էր հիշել Օչ-Իշին և՛ Իմեգոյին, և՛ Հա-Յոյին, և՛ Ուի-Նուչին, էլ չենք խոսում Նիլլ Բոնների ու Ջոն Թոմպսոնի և նրա իշխանությունն իրենց վրա զգացած մյուս սպիտակամորթների մասին: Բայց սա տեսավ ընդամառ եկող կնոջ երկնագույն մեծ աչքերը, նրա քնքուշ ու սպիտակ մաշկը, գնահատեց նրան, ինչպես կարող է գնահատել տղամարդը, և զգաց, որ փոքրանում ու ոչնչություն է դառնում այդ շողողացող գեղեցկության առջև:

— Դուք ուզում էիք իմ ամուսնո՞ւն տեսնել, — հարցրեց կինը, և Ջիս-Ուկը գմայլվեց նրա ձայնի զրնգացող արծաթով: Այդ կինը չէր գոռգոռացել մոլտացող գայլանման շների վրա, նրա կոկորդը կոկորդային խոսքի սովոր չէր, չէր կոշտացել քամուց ու ցրտից, ճամբարային խարույկների ծխի մեջ:

— Ո՛չ, — դանդաղ պատասխանեց Ջիս-Ուկը, հատ-հատ ընտրելով բառերը, որպեսզի ցույց տա անզվերեն լեզվի իր գիտելիքները: — Ես ուզում եմ Նիլլ Բոններին տեսնել:

— Դա իմ ամուսինն է, — ժպտաց կինը:

Ուրեմն ճիշտ էր: Ջոն Թոմպսոնը չէր ստում փետրվարյան այն մռայլ օրը, երբ ինքը հպարտորեն ծիծաղեց նրա երեսնիվեր ու շրխկացրեց դուռը: Այն զգացմունքը, որը նրան ժամանակին ստիպեց իր ծնկների վրա զգել Ամոս Փենտլիին և դանակ քաշել նրա վրա, այժմ անզուսպ կերպով նրան մղում էր նետվելու այդ կնոջ վրա, ցած գլորելու նրան և գեղեցիկ մարմնի միջից խլելու կյանքը:

Մտքերը փոթորկի արագությամբ պատսվում էին Ջիս-Ուկի գլխում, բայց նա ոչնչով չմատնեց իրեն, և Քիտտի Բոնները այնպես էլ չհիմացավ, թե ինքը այդ պահին որքան մոտ էր մահին:

Ջիս-Ուկը ի նշան հասկանալու գլխով արեց, և Քիտտի Բոնները ավելացրեց, որ ուր որ է Նիլը կվերադառնա: Յետո նրանք նստեցին անհեթեթության հասնող հարմար բազկաթոռների մեջ, և Քիտտին փորձեց իր արտասովոր հյուրին զբաղեցնել խոսակցությամբ: Ջիս-Ուկը որքան կարող էր օգնում էր նրան:

— Դուք ամուսնուս հետ հանդիպե՞լ եք Յյուսիսում,— ի միջի այլոց հարցրեց Քիտտին:

— Ըհը, ես նրան լվացք անել, — պատասխանեց Ջիս-Ուկը: Նրա անզվերեն խոսակցությունն սկսեց արագորեն վատանալ:

— Սա ձեր տղա՞ն է: Իսկ ես աղջիկ ունեմ:

Քիտտին ուղարկեց իր աղջկան կանչելու. ու մինչ երեխաները ծանոթանում էին, մայրերը մայրական խոսակցություն էին վարում և թեյ խմում: Ճենապակին այնքան նուրբ էր, որ Ջիս-Ուկը վախենում էր սեղմելով փշրել իր բաժակը: Նա առաջին անգամն էր այդպես գեղեցիկ ու փիտրուն բաժակներ տեսնում: Նա մտովի դրանք համեմատեց թեյ լցնող կնոջ հետ, և նույն պահին ակամայից հիշեց թոյասների փայտե ու թիթեղե տափաշները, Քսաներորդ Մոդոնի կավե կոշտ ու կոպիտ բաժակները, և դրանք համեմատեց իրեն հետ: Այսպիսի կերպարներով էր դիլեման պատկերանում Ջիս-Ուկին: Նա պարտված ճանաչեց իրեն:

Գտնվել է մեկ ուրիշ կին, որն ավելի արժանի է Նիլի երեխաների մայրը դառնալուն: Որքան Նիլի ցեղը գերազանցում էր իր ցեղին, այնքան նրա ցեղի կանայք գերազանցում էին իրեն: Նրանք նվաճում էին տղամարդկանց, ինչպես նրանց տղամարդիկ աշխարհն էին նվաճում: Ջիս-Ուկը նայեց Քիտտի Բոնների նուրբ շառագույն դեմքին և հիշեց իր արևախանձ այտերը: Յետո նա հայացքը թխամորթ ձեռքից փոխադրեց սպիտակ ձեռքի վրա: Մեկը ծածկված էր ճաքերով ու կոշտուկներով, որոնք առաջացել էին թիակից ու մտրակի բռնակից, իսկ մյուսը, որը աշխատանք չէր տեսել, նորածնի ձեռքի նման փափուկ էր ու քնքուշ: Բայց և այնպես չնայած այդ կնոջ փափկությանն ու արտաքին թուլությանը, Ջիս-Ուկը նրա կապույտ աչքերի մեջ տեսավ այն ուժը, որը ինքը տեսել էր Նիլ Բոնների և նրա ցեղակիցների աչքերում:

— Ախր սա Ջիս-Ուկն է,— ասաց ներս մտած Նիլ Բոնները: Նա ասաց հանգիստ, նույնիսկ սրտանց, սեղմելով եկվոր կնոջ երկու ձեռքերը, բայց Ջիս-Ուկը տագնապ տեսավ նրա աչքերի մեջ ու հասկացավ:

— Բարև, Նիլ,— ասաց նա:— Ինչպե՞ս ես:

— Լավ եմ, լավ, Ջիս-Ուկ,— ուրախ պատասխանեց նա, գաղտագողի նայելով Քիտտիին և աշխատելով կռահել, թե ինչ է տեղի ունեցել նրանց միջև: Բայց նա ճանաչում էր իր կնոջը և գիտեր, որ ոչինչ չի կարողանա կարդալ նրա դեմքի վրա, նույնիսկ եթե ամենավատ բանն էլ եղած լիներ:

— Դե, շատ ուրախ եմ քեզ տեսնելուն համար,— շարունակեց նա:— Ի՞նչ է պատահել: Երա՞կ ես գտել: Իսկ ե՞րբ ես եկել:

— Ախ, հա՛, այսօր եմ եկել,— պատասխանեց Ջիս-Ուկը, անգիտակցաբար ընդգծելով կոկորդային հնչյունները:— Չեմ գտել, Նիլ: Ունայաշկայի Մարքեյն նավապետ ճանաչո՞ւմ ես: Ես երկար-երկար ժամանակ եփել-թափել նրա տուն: Փող կուտակել և շատ: Ես վճռել՝ լավ է տեսնել սպիտակների երկիր: Շա՛տ գեղեցիկ է սպիտակների երկիր: Շա՛տ գեղեցիկ,— ավելացրեց նա:

Նրա խոսակցությունը Նիլին զարմացրեց: Նա և Սենդին Ջիս-Ուկին խնամքով սովորեցրել էին անզվերեն խոսել, և նա ընդունակ աշակերտուհի էր եղել: Իսկ հիմա նա իր ցեղակիցների պես էր խոսում: Ջիս-Ուկի դեմքը անհոգ էր, անվրդով-անհոգ, և նրան նայելով որևէ բան հասկանալ հնարավոր չէր: Կնոջ հանգստությունը նույնպես շփոթեցնում էր Բոններին: Ի՞նչ էր տեղի ունեցել: Ի՞նչ էր խոսվել: Ի՞նչ է հասկացվել առանց բառերի:

Մինչ նա փորձում էր հասկանալ այս հարցերը, իսկ Ջիս-Ուկը փորձում էր իր դիլեման լուծել (Նիլը երբեք այդքան գեղեցիկ չէր եղել), լուրջություն տիրեց:

— ՉԷի կարող պատկերացնել, որ դուք Այասկայում հանդիպել եք ամուսնու,— կամացուկ ասաց Քիտտի Բոնները:

Հանդիպել: Ջիս-Ուկը չկարողացավ իրեն զսպել ու չնայել որդուն, որը սերել էր նրանից: Նիյը մեքենաբար նրա հետ միաժամանակ նայեց այնտեղ, ուր լուսամուտի մոտ երեխաներն էին խաղում: Թվում էր, թե երկաթե օղակը սեղմեց նրա կոկորդը, իսկ սիրտը մուրճի պես հարվածեց կրծքում: Իր որդի՛ն: Իր մտքո՛վ անգամ չէր անցնում:

Փոքրիկ Քիտտի Բոնները, կապուտաչ, վարդագույն այտերով, իր օդեղեն հագուստի մեջ նման հեքիաթային ոգու, կոկետորեն շուրթերն էր երկարում, աշխատելով համբուրել տղային: Իսկ սա, նիհար ու ճկուն, քամիարված, արևախանձ, մորթե հագուստով և ասեղնազարդ, ծոպերով զարդարված մուկլուկներով, որոնք նկատելիորեն մաշվել էին ճանապարհին, անվորդով էր մնում չնայած փոքրիկ աղջկա բոլոր խորամանկություններին: Նա իրեն պահում էր լարված ու շիտակ, ինչպես վայրենիների երեխաներն են իրենց պահում: Լինելով օտարերկրացի՝ օտար երկրում, նա ոչ շփոթված էր, ոչ էլ վախեցած և հիշեցնում էր լռակյաց ու զգուշավոր վայրի գազանիկի: Նրա սև աչքերը սահում էին դեմքերի վրայով, և զգացվում էր, որ նա հանգիստ է, քանի դեռ ամեն ինչ հանգիստ է, բայց վտանգի մի չնչին նշույլի դեպքում նա կցատկի և կկծոտի ու կճանկոռոտի՝ պայքարելով իր կյանքի համար:

Երեխաների հակասությունը հսկայական էր, բայց տղան խղճահարություն չէր առաջացնում: Շպակի, Օ'Բրայենի և Բոնների այդ ժառանգի մեջ բավականաչափ շատ ուժ կար: Նրա դիմագծերը, որոնք մեղալային էին իրենց գրեթե դասական խստության մեջ, պարունակում էին արիությունն ու եռանդը նրա հոր, պապի և Գիրուկ մականվանված Շպակի, որին առևանգել էին ծովի մարդիկ, և որը փախել էր Կամչատկա:

Նիյը Բոնները աշխատում էր հաղթահարել իր զգացմունքը, խեղդում էր այն և ժպտում սիրալիր, բարեհոգի մի ժպիտով, որով բարեկամներին են դիմավորում:

— Զո տղա՛ն է, հա՛, Ջիս-Ուկ,— ասաց նա, և դիմելով Քիտտիին, ավելացրեց.— Գեղեցիկ տղա է: Հավատացած եմ, որ նա, երբ մեծանա, շատ առաջ կգնա:

Քիտտին գլխով արեց:

— Անունդ ի՞նչ է,— հարցրեց Քիտտին:

Փոքրիկ վայրենին քննախույզ նայեց նրան, աշխատելով հասկանալ, թե ինչու են այդ բանը հարցնում իրենից:

— Նիյ,— հանդարտ պատասխանեց նա, գոհ՝ զննելու արդյունքից:

— Ասա հնդկացի,— միջամտեց Ջիս-Ուկը անմիջապես նոր լեզու հորինելով:— Նրան հնդկացիներեն, ասել «նի-էլ», նույնն է , ինչ որ «պաքսիմատ»: Փոքրիկ էր, սիրում էր պաքսիմատ, խնդրում էր պաքսիմատ, անընդհատ ասում էր՝ «նի-էլ, նի-էլ»: Իսկ ես ասել՝ այդպես լինի նրա անուն: Եվ ահա անունը Նիել:

Ջիս-Ուկի այս սուտը Նիյը Բոնների ականջներում հնչեց որպես մի հրաշալի երաժշտություն: Ահա թե ինչով էր բացատրվում Քիտտիի հանգստությունը:

— Իսկ նրա հա՛յրը,— հարցրեց Քիտտին:— Երևի գեղեցի՛կ մարդ է:

— Օօօ-ա, այո՛,— եղավ պատասխանը:— Նրա հայրը գեղեցիկ, այո:

— Նիյը, դու նրան ճանաչո՞ւմ էիր,— հետաքրքրվեց Քիտտին:

— Ճանաչում էի: Շատ մոտիկից,— պատասխանեց Նիյը: Եվ նրա աչքերի առջև հառնեց մռայլ Բասներորդ Մոլոնը և լռությամբ շրջապատված մարդը՝ իր խոհերի հետ մենամենակ:

Այստեղ կարելի էր ավարտել Ջիս-Ուկի պատմությունը, բայց դեռևս մնում է պատմել, թե նա ինչպես ավարտեց իր մեծ գոհաբերությունը: Երբ նա վերադարձավ Հյուսիս և նորից բնակվեց իր մեծ տանը, Ջոն Թոմպսոնը իմացավ, որ Ընկերությունը կաշխատի հետագայում յուր գնալ առանց իր ծառայությունների: Նոր գործակալը, ինչպես և նրա բոլոր հետնորդները, ցուցում ստացավ

Ձիս-Ուկ անունով կնոջը բոլոր տեսակի ապրանքներն ու մթերքները բաց թողնել այնպիսի քանակությամբ, ինչ քանակությամբ նա կցանկանա, ոչ մի վճար չպահանջելով: Դրանից բացի, Շնկերությունն սկսեց հինգ հազար դոլարի չափով ամենամյա թոշակ վճարել Ձիս-Ուկ անունով կնոջը:

Երբ տղան մեծացավ, նրանով զբաղվեց հայր Շամպրոն, և շուտով Ձիս-Ուկի անունով սկսեցին պարբերաբար նամակներ ստացվել Մերիլենդի ճիզվիտական քոլեջից: Հետո այդ նամակները գալիս էին Իտալիայից, իսկ ավելի ուշ՝ Ֆրանսիայից: Իսկ հետո Այասկա եկավ ոմն հայր Նիլ, որը մեծ օգուտ բերեց հարազատ երկրին և իր գործունեության ասպարեզն ընդլայնելով, վերջ ի վերջո մեծ պաշտոնի հասավ օրդենում:

Ձիս-Ուկը, երբ Հյուսիս վերադարձավ, դեռ երիտասարդ էր, և տղամարդիկ առաջվա նման այք էին գցում նրա վրա: Բայց նա ապրում էր ազնվաբար, և նրա մասին միայն կարելի էր լավը լսել: Նա որոշ ժամանակ եղավ Սուրբ Խաչի առաքելության գթության քույրերի մոտ: Այնտեղ նա գրել-կարդալ սովորեց և որոշ բան իմացավ հիվանդությունների բուժման մասին: Իսկ այնուհետև նա վերադարձավ իր մեծ տունը, և այնտեղ հավաքում էր թոյատական գյուղի աղջիկներին, որպեսզի նրանց ցույց տա կյանքի ճանապարհը: Նիլ Բոնների կողմից իր կնոջ՝ Ձիս-Ուկի համար կառուցված տան մեջ գտնվող այդ դպրոցը չի կարելի անվանել ոչ բողոքական, ոչ կաթոլիկական: Բայց բոլոր տեսակի առաքյալներն էլ հավասարապես հավանություն են տալիս նրան: Չմեռ թե ամառ՝ նրա դռները միշտ բաց են, և հոգևած ոսկեխույզներն ու տանջված ուղևորները թեքում են ճանապարհը, որպեսզի հանգստանան ու տաքանան Ձիս-Ուկի օջախի մոտ: Իսկ Քիտտի Բոնները, որը հարավում է ապրում՝ Նահանգներում, հավանություն է տալիս Այասկայում կրթության հարցերի նկատմամբ իր ամուսնու հետաքրքրությանը և այն պատկառելի գումարներին, որ նա զոհաբերում է այդ նպատակի համար: Ու թեև Քիտտին հաճախակի ծաղրում և տնազում է նրան, հոգու խորքում էլ ավելի է հպարտանում նրանով: